

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ՀԱՐԱԻԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՆՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ

1966 Սեպտեմբեր 17 — 1967 Ապրիլ 21

Ամեն. Տ. Եղիշե Ս. Արք. Տէրաբեկեան
Բարեխնամ Պատրիարք Ս. Աթոռոյ
Երուսաղէմ

Ամեն. Ս. Հայր,

Անցեալ Օգոստոսին ձեզի պարտականութիւն յանձնեցիք չըջիլ Հարաւային Ամերիկայի Հայ դպրութիւնները, եւ հաւաքել այն դրամական խոստումները, որոնք կատարւած էին Զերդ Ամենապատուութեան Հարաւային Ամերիկա այցելութեան առիթով, Ս. Յարութեան Տաճարի վերաշինութեան նպատակով: Հետեւաբար 1966 Սեպտեմբերի 17-ին ճամբայ ելանք դէպի Հարաւային Ամերիկա եւ Պուէնոս Այրէս հասանք 4 Հոկտ. 1966-ին:

Առաջին օրէն իսկ շատ սիրալիր ընդունելութիւն դատեք Հարաւային Ամերիկայի Հաշրապետական Պատուիրակ եւ Ս. Աթոռիս շնորհալի միտքան Գերշ. Տ. Բարդէն Ս. Արք. Ապատեանի կողմէ ու մինչեւ մեր մեկնումի օրը մնացինք սրպէս հիւրը տեղ-

ւոյն Առաջնորդարանին եւ Նորին Սրբազնութեան:

Ըստ պատշաճի պատարագեցինք, քարոզեցինք Պուէնոս Այրէսի, Մօնթէվիտէոյի, Սան Փաւլոյի, Գարապատի եկեղեցիներուն մէջ եւ Հայ մամուլի մէջ արուած յատուկ կոչերով շնչեցինք Ս. Յարութեան Տաճարի վերանորոգութեան անհրաժեշտութիւնը, Երուսաղէմի Սրբատեղեաց մէջ մեր ունեցած ազգային անդնահատելի իրաւունքները եւ մեր փառաւոր զիրքին անխաթար պահպանումին անհրաժեշտութիւնը:

Ընդառաջելով մեր կոչին, մեր հաւատացեալ ժողովուրդը հետզհետէ վճարեց իր կատարած խոստումները, ու շատեր որոնք չէին մասնակցած հանդանակութեան՝ կատարեցին իրենց պարտականութիւնը այս առիթով:

Հանդանակութեան ընդհանուր արդիւնք եղաւ 33,753.61 տմերիկեան տոլար: Ստորեւ կու տանք հանդանակութեան ընդհանուր հաշուեկշիռը:

ՄՈՒՏՔ

Պուէնոս Այրէսի մէջ հանդանակուած
Ս. Փաւլոյի մէջ հանդանակուած
Գարապատի մէջ հանդանակուած
Մօնթէվիտէոյի մէջ հանդանակուած

Տոլար
20654.20
7870.00
3220.20
2009.21

ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ՄՏԻՑ — 33753.61

Ե Լ Ք

Տոլար

50.00

Ս. Փաւլոյի մէջ մանր ծախքեր

Գարադասի մէջ հանդանակութեան ընթացքին զործածուած
ինքնաշարժի եւ հանդանակութեան ընկերացողին եւ այլ
մանր ծախքեր

100.00

Մօնթէլիտէոյի մէջ կատարուած մանր ծախքեր

30.50

Պուէնոս Այրէս, Հիւս. Ամերիկա եւ համայն
նուիրակութեան ծախքեր

Ճամբորդական ծախքեր (նաեւ քաղաքամէջի ճամբորդութիւններ)

817.00

Տպագրականք

20.00

Պանդոկներու ծախք

715.00

Փոստին (թղթակցութիւններ եւ կոչերու տուբուս)

120.00

Մոզական լսարանի ծախքեր եւ սլաշտ

60.00

Պարզեւք (Պ. Այրէսի սպասուհիին եւ այլոց)

40.00

Մանր ծախքեր

100.00

Զրկատեղէն

100.00

Նուիրակին սննդադին

480.00

2632.50

Երուսաղէմ՝ Ամեն. Պատրիարք Ս. Հօր փոխանցեալ

31121.11

ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԵԼԻՑ.— 33753.61

Երուսաղէմ՝ Ամեն. Պատրիարք Ս. Հօր փոխանցեալ գումարին
մանրամասնութիւնները

Տոլար

18-12-66 թուակիր նամակով Պուէնոս Այրէսէն ղրկուած

1783.71

20-12-66 թուակիր նամակով » » »

2846.00

22-12-66 » » » » »

2626.70

25-12-66 » » » » »

9360.00

16-2-67 » » Նիւ Եորքէն ղրկուած

12250.70

27-5-67-ին Երուսաղէմ՝ Պատրիարք Ս. Հօր փոխանցուած

ձեռամբ Պր. Կ. Հինդլիանի

1200.00

5-1-67-ին Պուէնոս Այրէսի Առաջնորդարանի վճարեալ՝ փա-
կելու համար Երուսաղէմի տարաքը Առաջնորդարանին
(Սոյն գումարը վճարուած էր Առաջնորդարանէն, Ս.
Պատրիարք Հօր կողմէ ի Պ. Այրէս կատարուած հանդա-
նակութեան ասթիւ, ամբողջացնելու համար 20,000 տո-
լարի գումարը, զոր այդ օրերուն պիտի փոխանցուէր
Երուսաղէմ)

1060.00

Երուսաղէմ փոխանցուած ընդհանուր գումար.— 31121.11

Սոյն հաշուեկշիռն էլ ղուրս, Պուէնոս Այ-րէսի հին եւ նոր խոստումներէն տակաւին դանձելի կը մնան հետեւեալները.

	Արժանք. փէսօ
Տիրապէքերէն եղբայրներ	500.000
Մանուկ Շիրինեան	670.000
Գէորդ Սարաֆեան	250.000
Ճէրէճեան եղբայրներ	100.000
Ստեփան Դպիրեան	30.000
Ժիրայր Էքշեան	100.000
Օննիկ Պատուրեան	20.000
Սեղբակ Թամբեան	10.000
Արամ Սահակեան	50.000
Համագումար. —	1730.000

Սոյն 1.730.000 փէսոյի դանձելիներէն մօտ 760.000 փէսոյին համար ստացած էինք պարտաւորակներ վճարելի մինչեւ 1967 Մարտ: Սոյն 770.000 փէսոյի գումարը եւս ցայսօր վճարուած ըլլալով կը մնայ ի պահ Գերշ. Տ. Բարդէն Ս. Հօր մօտ, որով մեր դանձելի նուիրատուութիւններուն ընդհ. գումարը կ'իջնէ 960.000 փէսոյի:

Յարգելի նուիրատուները սոյն մնացեալ նուիրատուութիւնները խոստացած են Ս. Աթոռ փոխանցել 1967ի ընթացքին, ձեռամբ Հայրապետական Պատուիրակ Տ. Բարդէն Ս. Արքեպիսկոպոսի:

Իսկ Սան Փաւլոյի մէջ, թէ՛ նախապէս եւ թէ՛ մեր առիթով կատարուած խոստումներէն հետեւեալները կը մնան վճարելի 1967 տարւոյ ընթացքին. —

	Տոկար
Ճօղէ Տիւլէքէնեան	1000
Գառնիկ Պաղարեան	250
Արա Պօհճայեան	300
Վարդէկառ Փոյատեան	250
Կարապետ Գարապաշեան	250
Սարգիս Գալէմբէրեան	100
Յակոբ Քէլէշեան	450
Երջանիկ Գրստճրկեան	2500
Համագումար. —	5100

Աշխատեցանք որպէսզի մեր այցելութիւնը Հարաւային Ամերիկա ըլլայ առիթ

մը ոչ թիայն տնտեսական, այլ բարոյական նուաճումի:

Հետեւաբար շարք մը դասախօսութիւններ կազմակերպեցինք Պ. Այրէսի, Բօրտօպայի, Մօնթէվիտէոյի, Սան Փաւլոյի եւ Գարապասի մէջ:

Այսպէս, Պուէնոս Այրէսի մէջ տունք մեզ դասախօսութիւններ մեղի նիւթ ունենալով՝ ա) Հայ Երուսաղէմ, բ) Հայ դըր-չադրական արուեստը եւ Երուսաղէմի Զեռադրատունը, գ) Ս. Երուսաղէմի Գանձատան թանկարժէք իրեղէնները, դ) Հայրենի Երկիր, ե) Ս. Էջմիածին, Հայաստանի պատմական վանքերը եւ Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետին այցելութիւնը Երուսաղէմ:

Մեր դասախօսութեանց ներկայ եղաւ աշխատութիւն, մանաւանդ երիտասարդ սերունդէն: Յայտնապէս նկատելի էր եկեղեցասիրութեան եւ Հայրենասիրութեան տաք շունչ մը որ կը վարակէր մեր երիտասարդութիւնը, մանաւանդ երբ ականատես կ'ըլլային մեր խօսքին ընկերացող գունաւոր եւ լուսատիպ մօզական լապտերի տեսարաններուն, որոնցմով կը ներկայացուէին Հայ Երուսաղէմը, Հայ Արուեստը, Հայոց Հայրենիքը Հայաստան եւ Հայուն հոգեւոր հայրենիքը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

Նոյնպիսի դասախօսութիւններ կրկնուեցան Բօրտօպայի, Մօնթէվիտէոյի, Սան Փաւլոյի եւ Գարապասի մէջ:

Մասնաւոր ելոյթներ եւս ունեցանք ռատիօկայաններէ, մասնաւորաբար Պուէնոս Այրէս: Պետական Ռատիօկայանը կէս ժամու շատ րացառիկ յատկացում մը կատարեց, որուն ընթացքին հայերէն եւ սպաներէն (թարգմանութեամբ Պր. Միհրան Սարաֆեանի) լեզուներով ներկայացուցինք Հայ Երուսաղէմը, Ս. Յարութեան նորոգութիւնը եւ Հայ ժողովուրդի ունեցած առանձնաշնորհումները Սրբատեղեաց մէջ: Նմանապէս Պ. Այրէսի պետական «Լա Նաս-իօն» թերթը պատկերազարդ յատուկ էջ մը յատկացուց մեզի՝ կատարելու համար այս անգամ նոյն ներկայացումները տեղական պետական մամուլով՝ եւս:

7 Յունուար 1967-ին մեկնեցանք Պուէնոս Այրէսէն եւ այցելեցինք Մօնթէվիտէոյի,

Սան Փաւլոյի, Գարապատի Հայ դպրոցի-ները: Վերոյիշեալ երեք դպրոցներուն մէջ եւս դասնք սրտադին բնականութիւն, ու հակառակ այն իրողութեան որ սոյն երեք դպրոցներն ալ տեղական իրենց եկեղեցի-ներու եւ մշակութային տուններու շինու-թեան գործին ձեռնարկած ըլլալով կը գտնուէին անտեսական ծանր եւ երբեմն մտահոգիչ պարտաւորութիւններու տակ, իրենց կարելին չինայեցին արդիւնաւորելու համար նաեւ երուսաղէմի Ս. Յարութեան Տաճարի հանգանակութիւնը:

Մեր վերադարձի ճամբուն վրայ հանդի-պեցանք Հիւսիսային Ամերիկա, ուր մնա-ցինք երկու ամիսներ եւ դարձեալ տունիք շարք մը դասախօսութիւններ (վերոյիշեալ նիւթերուն շուրջ) Հիւսիսային Ամերիկայի կարգ մը դպրոցներուն մէջ:

Ամերիկայէն մեկնեցանք 1967 Մարտ 21-ին եւ Ս. Էջմիածին հասանք 23 Մարտին եւ հոն մնացինք մինչեւ Ապրիլ 10, ուր դարձեալ ի ներկայութեան ընտրանի հաս-րակութեան մը, տունիք դասախօսութիւն մը՝ ներկայացնելով Հայ երուսաղէմ, իր Գանձատունն ու զրջադրական հարստու-թիւնը: Այս առիթիւ Ամենայն Հայոց Վեհա-փառ եւ Սրբազնապօռն Հայրապետը, Զեւրդ Ամենապատուութեան գիտակցութեամբ շը-նորհեց մեզի վարդապետական կարգի ծայ-րագունութեան աստիճանը:

Ս. Էջմիածնէն գէպի երուսաղէմ մեր վե-րադարձի ճամբուն վրայ, Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետի բարձր հրամանով, երեք օրեր մնացինք Պոլիս, Նորին Ամենապատ-ուութիւն Տ. Շնորհք Պատրիարք Ս. Հօր մօտ, Զեւրդ Սրբազնութեան ծանօթ առաքե-լութեամբ:

21 Ապրիլ 1967-ին վերադարձանք երու-սաղէմ:

25 Յունիս 1967

Այստեղ, նախքան փակումը մեր տեղե-կադրին, մեր երախտադիտութեան օրտա-դին զգացումները կը յայտնենք մեր շատ սի-րեցեալ եւ թանկագին Հօր, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, Նորին Սրբու-թեան մեր նկատմամբ ցոյց տուած գնահա-տանքի հայրական վերաբերմունքին համար:

Շնորհակալութեան պարտք ունինք Զե-ղի, սիրելի Ամենապատիւ Պատրիարք Ս. Հայր, որ մեզի վստահեցաք Հարաւային Ա-մերիկայի նուիրակութեան այս գործը:

Շնորհակալութիւն Հարաւային Ամերի-կայի մեր շատ պատուական եղբայրակցին, Հայրապետական Պատուիրակ Գերշ. Տ. Բարդէն Ս. Արք. Ապատեանին, որ ազ-նւօրէն բերաւ իր հիւրասէր ասպնջակա-նութիւնը եւ գործակցութիւնը նուիրակու-թեան մեր գործին, մեզ հետ կիսելով այդ գործին բոլոր դժուարութիւնները:

Շնորհակալութիւններ մեզ գործակցող բոլոր հոգշ. հովիւներուն, Պուէնոս Այրէսի Կեդրոնական Վարչութեան եւ այլ քաղաքաց ծրական վարչութիւններուն, ազգային դա-նադան կազմակերպութիւններուն, Հայ Մամուլին, Սան Փաւլոյի մէջ մեզի ջերմօրէն գործակցող Պրնք. Անդրէաս Ճա-ֆէրեանին եւ Գառնիկ Պաղարեանին, եւ նուիրատու համայն մեր բարեպաշտ աղնիւ ժողովուրդին, որոնց բոլորին համար կը հայցենք Աստուծոյ եւ Քրիստոսի կենարար Ս. Գերեզմանին օրհնութիւնները:

Մատչելով ի համբոյժ

Ձեր Բարձր Սրբազնութեան Ս. Աթոյն,

Որդիական խոնարհութեամբ,

ԿիիՐԵՂ Ծ. ՎՐԴ. ԳԱԲԻԿԵԱՆ

Նուիրակ Ս. երուսաղէմի

ի Հարաւային Ամերիկա